

ու փորձով ապացուցած յաջողութիւնն ու արգիւնաւորութիւնը տեղիք են տալիս մեզ բուսալ, որ պ. Խմբագիր — հրատարակիչը իւր այս նոր հրատարակութեամբը ևս հայ Ազգի և Եկեղեցւու խնկական շահուց անաշառ և խոհական ջերմ՝ պաշտպան հիմնդիսանայ: Այս ակնկարաւթեամբ ահա շնորհաւորելով Արքայականի հրատարակութիւնը՝ կցանկամք Մեծ Խմբագրին տոկուն գործունեութիւն և կատարեալ յաջողութիւն:

Կայյն շարաթաթերթը կրազկանայ քառածալ զիրքով 16 երեսներէ և տարեկան զինն է 5 ու:

ԴՐԱՔՆՆԱԿԱՆ.

Հայ լեզուի ինքնակոչ բարբարութեալ Պ. Պ. Արծրունի, որ ամեն առթի մէջ լեզուի վերանորոգում կքարոզէ, իրեւ օրինակ իւր ընտիր հայկաբանութեան և իր ճաշակ իւր քարոզած լեզուի բարենորոգման, Մշակի վերջին մի քանի մեռ ահամարների մէջ իւր հրատարակած հետեւեալ նախադասութիւններն կներկարացնենք ընթերցողաց:

ՊԵՏԵԲԲՈՒՐԴ 5 Մարտի Պրօֆէսոր Բոււալերով ստացաւ համակական նամակներ Վարշաւիայի համալսարանի 28 Պրօֆէսորներից ակադեմեան մերկացնելուն պատճարով »: Մշակ № 40:

Մշակ, որ 11 տարիէ ի վեր ոռւսերէնէ հայերէն կմարզմանէ, կերեւ թէ տակաւին չէ ուսած որ լաւ Բարբարութեալ ասածդ՝ պէտք է լինի այնպէս ուր շփոթ իմաստ կամ երկմտութեան ենթակայ մի խօսք չգտնուի, մինչեռ վերդիշեալ թարգմանութեան մէջ՝ յայտնի չէ թէ, Պրօֆէսոր Բոււալերով համակրական նամակներ ստացեր է Ակադեմեան այդ Վարշաւիայի 28 Պրօֆէսորներիցը մերկացնելուն պատճառաւը, թէ այդ Վարշաւիայի 28 Պրօֆէսորներէն համակրական նամակներ է ստացել Ակադեմեան մերկացնելուն պատճառաւը: Երկրորդ՝ անհասկաննելի է նաևս թէ ի՞նչ կնշանակէ Ակադեմեան Արքայական Պրօֆէսոր Բոււալերով արդեօք Ակադեմեան կողոպտել է զայն մերկացնելով, թէ կեղտոտած լինելուն համար բաղնիք տարեր ու զայն լուսալու համար մերկացուցել է: Հայերէնի մէջ արդեօք ոռւսերէն բառին իմաստին աւելի ճիշտ համապատասխանող ուրիշ բառ մը չէր կարելի գտնել ու գնել փոխանակ «մերկացնել» բառին, Ակադեմեանին հետ միասնեղ՝ Մշակի ևս թարգմանչական կարողութեան խեղճութիւնն այսպէս ողորմի կերպիւ չը մէքանչնելոց համար: Թռչումք պատճառ՝ բառին ու զին տեղ ու գիրը զործածելու անհմտութիւնն, զոր վեհանձն ներողամութեամբ իրեն կրաշխամք:

ՊԵՏԵԲԲՈՒՐԴ 7 Մարտի Թատրոնի այրվելու ժամանակ մարգեկանց հետ գժբազգութիւններ չպատահեցաւ »: Մշակ № 40:

Առ քեզի հայութեան նոր ոճ մ' ալ, եթէ մարդկերանց հետ չպատահեցաւ, յայտ է թէ այդ գժբաղզութիւնը թատրօնի մկներին հետ պատահել է, բայց ի՞նչ կնշանակէ հայերէն՝ « մարդկերանց հետ գժբաղզութիւն պատահել » խօսքը, Մի՛ գուցէ ասել ուզած լինի թէ մարդոյ կորուստ կամ անձի վեաս չէ պատահել այդ գժբաղզ արկածին մէջ, Նւ միթէ այս իմաստը բացատրելու համար աւելի յարմար բառ կամ ասացուած արգեօք կոպակասէր հայերէն լեզուի մէջ, — Տշմարիտ՝ հետազրական գործակալութիւնը եթէ իմանար թէ իւր հեռագիրներն այս աստիճան ողորմելի և չարաշար կերպիւ սպաննուելու վրայ ին Մշակի մէջ, Նոյն վայրկենէն կը դադարէր հեռագիր հաղորդելէ Մշակի:

Անցելներն ալ, չեմ յիշեր ո՞ր թուահամարին մէջ, ԱՐՁԱԿԱՆՔ շարամեմերթի ի լրյս ընծայումն և հրատարակութեան սկսումն ծանուցանելցին առթիւ կասէր « ՓՈՐՉի նախկին խմբագիր — տնօրէն Պ. Արգար Յովհաննիսեանցի տնօրէնութեամբ և խմբագրապետութեամբ :

Փափագելի էր մեզ իմանալ որ եթէ ՓՈՐՉի նախկին խմբագիրն էր Պ. Արգար Յովհաննիսեանցի, արգեօք այժմու կամ վերջին խմբագիրն ո՞վ էր եղած . . . Սակայն կը կարծեմք զիտնալ թէ Մշակ այդ բառով կամք ասել « երբեմն ՓՈՐՉի խմբագիր — տնօրէն իսկ երբէն և հանին բառից իմաստի տարբերութիւնը չգիտնալովը՝ ընկած է այդ անխմատ կամ շփոթիմասի նախագաստութեան ողորմելի և ծիծաղելի վիճակին մէջ, Աստուած աղատէ զինքն:

ԲԱՆԱԴԱՏԱՑՆ:

ԱՅԼ ԵԿ ԱՅԼԻ.

ԱՀԱ-ՀԱ-ԲԱ-Ն շ-շ դ-դ-դ-դ: — Հոռվմ քաղաքից 20 Յունվորի (1 Փետրվարի) Խորութիւն (ն-դ-դ- նորութիւն) Առուս օրամերթին հաղորդումնեա:

« Մենք Տշմարիտ որ ապրումենք այնպիսի մի ժամանակաւմ երբ սոկեհօրթին ամեն բան մատաղ են անումն՝ հայրենիքի բարեկեցութիւնը համազմունքը պատիւը և սեպհական որդիքն անգամ։ Առեալ մարդկի ասումնեա, թէ առաքինութիւնը և թէ մոլութիւնը կախուած են պայմաններից, որոնց մէջ զրուած է մարդը։ Պէտք է որ լու լինին պայմանները, ոյսինքն հասարակութիւնը որ չգոյացնէ այսպիսի ճիւաղներ, որոնց այս օրերում գատեցին այստեղ Հոռվմ քաղաքում։ Հոգիս ուարսափումն մտաբերելու ժամանակ, թէ ի՞նչ զարհութիւն յանցանքներ գործելու ընդունակ է մարդը փողի համար։ Կիարգօյի մէջ պանդոկապահ Անտօնիօ Քլանկ և նորա ամուսինը ունէին միակ գուստը Մարգարիտ անուն՝ քսան ամաց։ Աղջիկը նշանաւոր գեղեցկութիւն ունէր, նորա շիկագործիր մազերը, գեղեցկապահ հասակը, կանոնաւոր դէմքի գծագրութիւնները և ածուխի պէս սկ աչքերը ստիպումին շատ երիտասարդների սիրալ գո-